Դիշանց, Կարա-Գեավուր, Փոսկոր, Սէմէ-դրէկ, Դիշենուտ, Մեծանց, Կան, Զափանց[1] լեռներից իջնում են Զափանց Վանք, Նա-խիձէ, Կելխազ առուակները, որոնք բոլորն էլ ոռոգում են համանուն դեղերը, սրանց մացրանները, եայլաները, ախոռները եւ վանքերը:

Սպերի հովիտն սկսւում է Նիգէյ առուակի խառնուրդից, եւ վերջանում է Հնուտ կըրկ-նակի վտակներով, որոնցից մին աջից եւ միւսը ձախից խառնւում են Ճորոխին: Այս ամբողջ երկարութիւնը ձգուած է արեւմուտ-քից արեւելահիւսիս, մօտաւորապէս քառա-սուն կիլոմետր երկարութեամբ, որի ճիշտ միջին մասումն է Սպեր աւանը, որ այսօր 350 տուն ժողովուրդ ունի: Մի ժամանակ Սպերու ապրում էին 4—5000 տնուոր, նոյն իսկ Օսման. աշխարհագրութեան ժամանակ 1530 Իբրահիմ փաշայի ցուցակներում — Գասաբայում (վարչութեան կենդրոն) 4500 ծուխ է արձանագրուած: Աւանի դիրքը, բեր-

---

1 Զափանց լեռները, որ սեղից իջնում է Զափանց առ-ը իր բազմաթիւ առուներով, բղխում է Զափանց լճակ-ներից: Այս լճակները քառասնից լճակներից 10—12 կիլո-մետր հեռաւորութիւն ունին եւ շարունակութիւնն են կազ-մում արեւմուտքից - արեւելք: Զափանց լեռնանցքը Սպերի եւ Ռիզէի ճանապարհի (կարավան) ճիշտ մէջ տեղն է եւ ժամանակին Ռիզէի հետ մեծ յարաբերութիւն է ունեցել: Սպերի բնակչութեան ծով իջնելու — պանդխտութեան ճանապարհն է, միանգամայն չոր միրգ, գինի եւ այլ բերքեր այստեղից էին Կ. Պոլիս եւ ուրիշ քաղաքներ փոխադրում: